

ԲԱՅԻ ՍԵՌԻ ԿԱՐԳԻ ԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ
ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ
ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Սույն հոդվածում քննարկվում են գերմաներենի բայի սեռի կարգի առանձնահատկությունները հայերենի զուգադրությամբ, օրինակները հիմնականում մեջբերված են Թոմաս Մանի "Բուդենբրոոկներ" վեպից, հայերենը՝ Հակոբ Մովսեսի թարգմանությամբ:

Բային հատուկ քերականական կարգերի մեջ սեռի քերականական կարգը իր առանձնահատուկ տեղն ունի թե հայերենում, թե գերմաներենում: Անմիջականորեն կապված լինելով բայիմաստի հետ՝ բայի սեռը ցույց է տալիս գործողության հարաբերությունը գործողի (սուբյեկտի) և գործողության առարկայի (օբյեկտի) հետ, ինչպես նաև այդ հարաբերության քերականական վերացարկման և արտահայտության ձևը, այսպես՝ կառուցել (մի բան), կառուցել տալ (մեկին՝ մի բան), կառուցվել (մեկի կողմից), ուստի այն բայի կարևորագույն հատկանիշներից է: Ս. Աբրահամյանի բնորոշմամբ բայի սեռը մի կարգ է, որ բացակայում է գործողության անուն հանդիսացող գոյականների մեջ, օրինակ՝(կառուցում): Սակայն այն դրսևորվում է բայի բոլոր ձևերում և հանդիսանում է բայը, հատկապես բայի անդեմ ձևերը, այլ խոսքի մասերից տարբերակող հիմնական հատկանիշը:

Բայի սեռի քերականական կարգը գրավել է դեռ անտիկ շրջանի քերականների ուշադրությունը: Դիոնիսոս Թրակացու մոտ սեռի իմաստով գտնում ենք «տրամադրություն» եզրը: Նա առանձնացնում է երեք տեսակ՝ ներգործական, կիր, միջին: Սլավոնական լեզուները չունեն կրավորական սեռի հայեցակարգ, օր՝. ռուսերենում որոշ բայեր ունեն անրադարձ ձևեր, ինչպես նաև «լինել» բայով և դերբայով արտահայտված կրավորականի ձևեր: Սանսկրիտը և հին հունարենը ունեն այսպես կոչված միջին կրավորական, միջանկյալ կառույց, որն ավելի երիտասարդ եվրոպական լեզուներում փոխարինվել է ան'րադարձ կազմության ձևերով: Կրավորական սեռը հունարենում, լատիներենում և գոթերենում ունի պարզ կազմություն ի տարբերություն գերմաներենի, որտեղ կրավորական սեռը կազմությամբ միայն բարդ է: Բայասեռ անվանումը ի տարբերություն «ժամանակի կարգ» (ներկա, անցյալ) անվանման չի տալիս պատկերացում այն մասին, թե ինչ իմաստային բաղադրիչներից են գոյանում բայի սեռերը: Հարց է ծագում, թե ինչու լեզվում, որը ի դեպ ձգտում է խնայողության, շարունակում են կողք-կողքի գոյություն ունենալ այս երկու կարգերը, երբ թե ներգործական, թե կրավորական նախադասությունները մույն

նշանակությունն ունեն: Արդյոք կրավորական սեռը ավելի հարմար է արտահայտվելու համար, արդյոք այն լեզվական շքեղություն ֆե, թե ներգործական սեռի հետ միասին անհրաժեշտություն է: Ընդունված է այն կարծիքը, որ կրավորական սեռի նկատմամբ քերականագետների հետաքրքրությունը բացատրվում է կազմության ձևերի և գործառական բարդություններով: (Eisenberg, Peter 1994):

Անմիջականորեն կապված լինելով լեզվի հաղորդակցային կողմի հետ՝ բայի սեռը պահանջում, թելադրում է շարահյուսական որոշակի կառուցվածք: Գործողության և դրա ուղորտում ընկած առարկաների միջև հարաբերությունը լեզվի մեջ, ելնելով հաղորդման նպատակից, ինչպես նաև կախված խոսակցի՝ այդ հարաբերության մասին իրազեկության աստիճանից, կարող է վերացարկվել և ներկայացվել այլ ձևով: Այդ հարաբերությունը քերականորեն դրսևորվում է հակադիր շարահյուսական կառույցների միջոցով՝ պայմանավորված բայի տարբեր սեռերի գործածությամբ:

Հայերենում բայի սեռային տարբերությունները երևում են ոչ միայն նրանցով թելադրած շարահյուսական կառույցներում, այլև ձևաբանական մակարդակում, քանի որ հայերենում կրավորական սեռը որպես բառային միավոր ունի իր ձևը՝ կառուցել-կառուցվել նշութավորվում է: Ղրանով էլ հենց պայմանավորված է բայի սեռը որպես ձևաբանական կարգ բնորոշելը: Ելնելով սեռի քերականական իմաստից, այնքան էլ միանշանակ չէ նրա տեղը քերականության մեջ, այն մաքուր ձևաբանական կարգ է, թե այնուամենայնիվ շարահյուսական է: Բացի այդ անվանական ստորոգյալով նախադասությունները չեն բնորոշվում որպես ներգործական կամ կրավորական:

Գերմաներեն քերականագիտության մեջ բայի սեռը հիմնականում բնորոշվում է հետևյալ կերպ. “Das Vorgangspassiv¹ drückt den gleichen Sachverhalt in der objektiven Wirklichkeit wie das Aktiv². (Helbig / Buscha, Deutsche Grammatik)

Ընթացքի կրավորականը ցույց է տալիս օբյեկտիվ իրականության միևնույն իրողությունը ինչ որ ներգործական սեռը: Ընթացքի կրավորականը, սակայն, տարբերվում է Aktiv-ից իրողության ներկայացման այլ հայեցակերպով: Եթե Aktiv կառույցի դեպքում գործողությունը ներկայանում է գործողությունը կատարողի միջոցով, ապա ընթացքի կրավորական կառույցում առաջին պլան է մղվում հենց գործողությունը՝ գործողին թողնելով ետին պլանում: Aktiv-ը բնութագրվում է այնպիսի գործողությամբ, որի կատարման

¹ Vorgangspassiv – թարգմանաբար՝ ընթացքի կրավորական, քանի որ գերմաներենում կա նաև վիճակի կրավորական քերականությունը:

² Չնայած գերմաներենի և հայերենի որոշ սեռային նմանություններին՝ գերմաներենի Aktiv-ը և հայերենի ներգործական սեռը համարժեք չեն, ուստի իմաստային չփոփոխություն չառաջացնելու համար գերմաներենում կպահպանենք գերմաներեն եզրերը:

համար անհրաժեշտ է գործող անձ, ընթացքի կրավորականը ցույց է տալիս մի գործողություն, որը շարահյուսորեն անկախ է գործողությունը կատարողից: Այսպիսով՝ Aktiv-ը արտահայտում է մի գործողություն, որը սկիզբ է առնում նախադասության ենթակայից և ուղղված է խնդրին, գործողության կողմը հանդիսանում է ենթական, իսկ Passiv սեռը ցույց է տալիս մի գործողություն, որը չի կատարում նախադասության ենթական, այլ ուղղված է ենթակային: Aktiv նախադասությունը մեկնաբանվում է գործողությունը կատարող անձի, առարկայի (Agens) դիրքերից, իսկ passiv նախադասության մեջ նույն գործողությունը ներկայացվում է՝ գործողությունը կատարող անձ, առարկան (Agens) երկրորդ պլան մղելով: Կրավորական կառույցների կարևորագույն առանձնահատկություններից մեկն էլ հենց այն է, որ առանց գործող անձին նշելու կարելի է գործողությունը ներկայացնել:

Aktiv S—>Handlung —> O (S) Agens —>Handlung —>> O (Objekt- Patiens)
 Passiv S<— Handlung <— PO (Präpositionalobjekt) (S) Patiens<— Handlung <— PO (Agens)

Բայի սեռի բնութագրման համար կարևոր է հաշվի առնել հետևյալը. "Սեռը բայիմաստի (գործընթացության գաղափարի) որոշակի տեսանկյունն է գործողության ոլորտ ներքաշված, նրա մեջ առնված առարկայի կամ առարկաների նկատմամբ, առարկա, որ կարող է լինել կամ գործողության սուբյեկտը կամ նրա օբյեկտը. երկու դեպքում էլ՝ առարկան առնված է գործընթացության մեջ, թեև բացառված չէ օբյեկտի մասնակի ներառում" (Յու Գաբրիելյան)

Այսպես ներգործական սեռը բնորոշում ենք բայական մի այնպիսի ձև, որը գործողության կատարման համար պահանջում է մի առարկա, որն իր վրա կրի, որին անմիջաբար անցնի գործողությունը, կրավորական սեռը բնորոշում ենք որպես բայական մի այնպիսի ձև, որի միջոցով նախադասության ենթական արտահայտվում է մեկ այլ գործողության մեկ այլ կողմի միջոցով:

Հայերենում բայի սեռը բնորոշվում է երեք եզրով՝ ներգործական, կրավորական և չեզոք. գերմաներենում դրանք նույնպես երեքն են (շատ քերականագետներ վիճակի կրավորականը դիտարկում են բայի սեռի կարգի հարացույցում)՝ Aktiv՝ պայմանականորեն համարենք հայերենի ներգործականի համարժեքը, Passiv, որը համարժեք է կրավորականին և Stativ կամ Zustandspassiv՝ թարգմանաբար՝ վիճակի կրավորական:

Aktiv են այն բայերը, որոնք ունեն ակտիվ գործողության նշանակություն, իսկ ներգործական սեռը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որի կատարման համար պահանջվում է առարկա, որն իր վրա կրի, որին անմիջաբար անցնի գործողությունը: Սրանով պայմանավորված՝ ներգործական սեռի բայերը թելադրում են նախադասության որոշակի կառույց. այն է՝ գործողության կատարող, որը դրսևորվում է քերականական ենթակայի միջոցով, գործողության կրող առարկա, որը ուղիղ խնդիրն է (ենթակա → ստորոգյալ → ուղիղ խնդիր):

Հայերենում ներգործական բայերի ուղիղ խնդիր պահանջելու հատկությունը դրսևորվում է ոչ միայն նախադասության մեջ, այլ նաև նախադասություններից դուրս, քանի որ հանդիսանում է նրա ներքին բովանդակային հատկանիշը, ինչ-որ առումով իմաստային բաղադրիչը:

Կրավորական սեռի բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որի կատարման համար նույնպես անհրաժեշտ է երկու առարկա՝ կատարող և կրող: Կրավորական սեռի քերականական ենթական ոչ թե ինքն է կատարում գործողությունը, այլ հանդիսանում է օբյեկտ մեկ այլ առարկայի կատարած գործողության համար, իսկ այդ գործողությունը կատարող առարկան նախադասության մեջ դրսևորվում է ներգործող խնդրի միջոցով, որն ի դեպ կարող է իմպլիցիտ մնալ և որպես կանխենթադրույթ մեկնաբանվել:

Ըստ Մ. Ասատրյանի ներգործական սեռի բայերը ցույց են տալիս մի այնպիսի գործողություն, որի ժամանակ տրամաբանական սուբյեկտի միևնույն ժամանակ քերականական ենթակայի կատարած գործողության համար պահանջվում է ուղիղ խնդիր լրացում (տրամաբանական օբյեկտ):

Ժամանակակից հայերենի բոլոր սկզբնաձևային (սեռածանց չունեցող) բայերը ըստ գործողության կատարողի և քերականորեն ուղիղ խնդրի՝ կրող առարկայի (օբյեկտի) նկատմամբ ունեցած հարաբերության բաժանվում են երկու խմբի՝ բայեր, որոնք ունեն ուղիղ խնդիր առնելու հատկություն և բայեր, որոնք չունեն և չեն կարող ունենալ այդպիսի հատկություն: Առաջին խումբը ներգործական սեռի բայերն են, երկրորդ խումբը՝ չեզոք սեռի: Ներգործական և չեզոք սեռի բայերը, նույնը լինելով ըստ գործողության սուբյեկտի նկատմամբ ունեցած հարաբերության դրսևորման քերականական ձևի (երկու դեպքում էլ՝ որպես քերականական ենթակա), հակադրվում են ուղիղ խնդրով դրսևորվող օբյեկտ առնելու կամ չառնելու հատկությամբ: Ինչպես արդեն նշվեց, ներգործական սեռ - չեզոք սեռ հակադրությունը ձևաբանորեն նշութավորված չէ: Այս դասակարգումը կատարվում է հիմնականում՝ ըստ բայերի դրսևորած իմաստային հարաբերությունների: Սա բայերի իմաստային ամենաընդհանուր դասակարգումն է՝ կապված նրանց արժույթայնության հետ և չէր համարվի նաև սեռային, եթե չլիներ դասակարգման հաջորդ աստիճանը՝ պայմանավորված բայերի սեռածանցներ առնելու և սեռը փոխելու հատկությամբ: Ժամանակակից հայերենում ներգործական սեռի բայերի ճնշող մեծամասնությունն ունի /՝ սեռածանց ընդունելու հատկություն: Վերջինս, չփոխելով բայի ցույց տված գործողության հիմքում ընկած առարկայական հարաբերությունների բնույթը, փոխում է դրանց քերականական դրսևորման եղանակը՝ բային հաղորդելով սեռային նոր որակի առանձնահատկություններ: Այն է՝ մի կողմից բային զրկում է ուղիղ խնդիր առնելու հատկությունից, մյուս կողմից փոխում է բայառիմբի ցույց տված գործողության հարաբերությունը քերականական ենթակայի նկատմամբ: Ուղիղ խնդիր չառնելու հատկությամբ նման լինելով չեզոք սեռի

բայերին՝ կրավորական սեռի բայերը հակադրվում են բայահիմքի գործողության ոլորտում եղած հարաբերության բնույթով, ինչպես նաև քերականական ենթակայի նկատմամբ ունեցած հարաբերությամբ: Եթե չեզոք սեռի բայերի ցույց տված գործողության համար պահանջվում է միայն մեկ առարկա՝ գործողության կատարող, որը քերականական ենթական է, ապա կրավորական սեռի բայերի ցույց տված գործողության հիմքում ընկած են երկու առարկաների՝ կատարողի և կրողի հարաբերություն:

Թե հայերենում, թե գերմաներենում հստակ է, որ կրավորական կառուցվածքի նախադասության տրամաբանական սուբյեկտը որպես գործողության, հատկանիշի ստեղծող այս կամ այն կերպ անտեսված է, նա չունի այն ուժն ու գորությունը, ինչ համապատասխան ներգործական նախադասության սուբյեկտը: Կրավորական կառուցվածքի նախադասության մեջ օբյեկտի դերն ավելի մեծ է, քան համապատասխան ներգործական կառուցվածքի նախադասության մեջ:

Եթե հայերենում բայի սեռի կարգը բնորոշվում է ըստ ձևի կամ բայերի՝ ուղիղ խնդիր պահանջելու տրամաբանությամբ, ապա գերմաներենում սեռի կարգի համար առաջնային է համարվում ենթակայի կատարած գործողության ուղղվածությունը, ակտիվ նախադասության քերականական և տրամաբանական ենթակաները համընկնում են, ենթական ակտիվ է, որից էլ բխում է գործողությունը, կրավորականի դեպքում ենթական պասիվ է, կրավորական նախադասության տրամաբանական և շարահյուսական սուբյեկտները չեն համընկնում: Հենց միայն «ակտիվ»-«պասիվ» բնորոշումով արդեն իմաստաբանական և շարահյուսական տարբերությունները ի հայտ են գալիս միանգամայն՝ գտնելով իրենց ձևաբանական արտահայտությունը: Օրինակ՝ *Սենյակը մաքրած է* նախադասության մեջ չկա գործողություն, ուստի և գործողության ուղղվածություն, չկան ներգործող և ներգործվող առարկաներ՝ գոնե առերևույթ (եթե մենք անտեսենք կանխենթադրույթների տեսությունը), հետևաբար չենք կարող խոսել ենթակայի ակտիվ կամ պասիվ լինելու մասին՝ ի տարբերություն *Սոնան մաքրում է սենյակը* ներգործական նախադասության, որտեղ շարահյուսական ենթական նաև տրամաբանական սուբյեկտն է, որից բխում է գործողությունը: Կրավորական կառույցի կազմության հնարավորությունը կախված է բայի իմաստից՝ դրանով պայմանավորված արժույթայնությամբ:

Գերմաներենում բայերը իմաստաբանորեն դասակարգվում են երկու խմբի՝ *objektiv* բայեր և *subjektiv* բայեր: *Subjektiv* բայերի դասի մեջ են մտնում շարժում, վիճակի փոփոխություն, վիճակ, տեղափոխություն և այլն ցույց տվող իմաստային խմբերի բայերը, մինչդեռ հայերենում այս իմաստային խմբի բայերը համարվում են չեզոք սեռի բայեր: Ինչպես գերմաներենում, այնպես էլ հայերենում այս իմաստային խմբի բայերը կրավորական սեռ չեն կազմում: Գերմաներենի *objektiv* բայերի դասը ներառում է անցողական (*verbum*

transitivum) անանցողական (verbum intransitivum) բայերը: Գերմաներենի նորմատիվ ջերականության դասագրքերում տրված է, որ կրավորական սեռ կազմվում է միայն անցողական բայերից, այսինքն՝ այն բայերից, որոնք պահանջում են ուղիղ խնդիր լրացում: Սրանք իսկապես ամենագործուն են կրավորական սեռի կազմության իմաստով, սակայն այս շարքը կարող է համալրվել անանցողական այն բայերով, որոնք իմաստային առումով թույլ են տալիս հանդես գալ կրավորական կառույցներում:

Գերմաներենում objektiv և subjektiv բայերը բացի իմաստային տարբերություններից հանդես են բերում նաև որոշ ձևաբանական առանձնահատկություններ. objektiv բայերը ի տարբերություն subjektiv բայերի գերակշիռ մեծամասնության, խոնարհվում են "haben" օժանդակ բայով՝

Die Bauarbeiter haben das Haus gebaut. – Das Haus ist gebaut worden (Vorgangspassiv) – Das Haus ist gebaut (Zustandspassiv)

Sein օժանդակ բայը պահանջող բայերով արտահայտված նախադասությունները փոխակերպելի չեն՝

Hans ist gelaufen. – *Hans wird gelaufen.

Մ. Աբեղյանը, որը գերմանական լեզվաբանական դպրոցի հետևորդ է, հայերենում նույնպես առանձնացնում է անցողական և անանցողական բայերը՝ առաջին դեպքում՝ ուղիղ խնդիր, իսկ երկրորդում՝ անուղղակի խնդիր պահանջելու տրամաբանությամբ: Անցողական բայերի դասը ներառում է ներգործական սեռի բայերը, որոնց ենթական ինքն է կատարում գործողությունը, և պատճառական բայերը, որոնց ենթական պատճառ է դառնում, որպեսզի մեկ ուրիշը կատարի գործողությունը: Անանցողական բայերն, իրենց հերթին բաժանվում են կրավորական սեռի և չեզոք սեռի բայերի: Պետք է նշել, որ այսպիսի դասակարգման հիմքը զուտ շարահյուսական է և չի կապվում սեռային դասակարգման հետ, քանի որ եթե այս դասակարգման համար հիմք ընդունենք գործողության անցումային ուղղվածությունը, ապա անցողական պիտի համարենք նաև կրավորական սեռի բայերը, որովհետև նրանք պահանջում են առարկա, որի անցնի գործողությունը:³ Գերմաներենի ջերականագիտությունը անցողական բայերով ակտիվ նախադասությունը համարում է փոխակերպելի, խոսքը վերաբերում է ոչ միայն Vorgangspassiv-ին, այլ նաև Stativ-ին (Zustandspassiv):

Գերմանագիտության մեջ առանձին խնդիր է, ինչպես վերը նշվեց, այսպես կոչված, վիճակի կրավորականի (Zustandspassiv) հարցը: Վիճակի կրավորականը, ի տարբերություն Aktiv և ընթացքի կրավորական սեռերի, գործողության ընթացք ցույց չի տալիս, այլ միայն վիճակ՝ որպես գործողության արդյունք:

³ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 375-376:

Das alles ist möglicherweise übertrieben und gefälscht. (S.27) – Այդ ամենը թերևս չափազանցված է ու կեղծված: (էջ 22)

Beide Flügel der Tür zum Schlafzimmer waren geöffnet. (S.50) – Բացված էին ննջասենյակ տանող դռների գույգ փեղկերը: (էջ 43)

Ակզբում *բացվում է* պատուհանը (Passiv), դրա արդյունքում պատուհանը *բացված է* (Zustandspassiv): Խնդիրն այն է, որ այս կառույցը ձևական առումով ունի ներգործականի տեսք, առաջին հայացքից հիշեցնում է սուբյեկտիվ բայերի ներգործական սեռի Perfekt ժամանակաձև, սակայն իմաստով մոտ է կրավորականին: Այն կազմվում է objektiv բայերից:

Այս դեպքում դրան հակադրվում է բուն կրավորականը՝ որպես ընթացքի կրավորական (Vorgangspassiv): Համեմատելով հայերենի համապատասխան ձևերի հետ՝ կարելի է կարծել, որ իսկապես այդ վիճելի ձևերը կրավորական են, քանի որ դրանք հայերենում արտացոլվում են որպես այդպիսիք ոչ միայն բովանդակությամբ, այլև ձևով: Խնդիրը, սակայն, հանգում է ոչ միայն տվյալ կազմությունների ձևին և բովանդակությանը: Հարց է առաջանում՝ արդյոք դրանք պետք է դիտարկել գերմաներենի բայի սեռի համակարգում և համարել սեռի տեսակ: Օրինակ լեզվաբաններ Մ. Գուխման, Վ. Ադմոնի և այլոց բնորոշմամբ sein+Partizip II ոչ թե վերլուծական ձև է, այլ յուրօրինակ շարահյուսական արժեքով բառակապակցություն: Այս կառույցը կարելի է դիտարկել նաև որպես անվանական ստորոգյալ, որտեղ sein օժանդակ բայը հանգույցն է, իսկ Partizip II դերբայը ստորոգելին: Ի տարբերություն sein + Partizip II կառույցի werden + Partizip II ձևի մեջ բաղադրիչները կորցնում են իրենց առաջնային իմաստը և դառնում են մեկ դարձվածքային ամբողջություն, մինչդեռ sein օժանդակ բայը և Partizip II դերբայը համապատասխան կազմություններում իրենց առաջնային իմաստները պահպանում են: Պատճառը ընդհանուր առմամբ հանգում է Partizip II դերբայի բազմիմաստությանը, ինչպես նաև նրա տարբեր գործառնական հնարավորություններին: Մասնավորապես այն կարող է ծառայել թե՛ ժամանակային, և թե՛ եղանակային ձևերի կազմությանը:

Հայերենում բայի սեռի կարգը բնորոշելիս նկատի ենք առնում բայի կրավորական, չեզոք կամ ներգործական լինելը, իսկ գերմաներենում շեշտը դրվում է նախադասության ակտիվ կամ պասիվ լինելու վրա: Այս դիտարկումը թույլ է տալիս կատարել շատ հետաքրքիր մեկնաբանություններ. գերմաներենի գործողություն ցույց տվող բոլոր բայերը “ակտիվ” են, սակայն ոչ բոլոր նախադասություններն են ակտիվ այն պարզ պատճառով, որ բացի ակտիվ նախադասություններից կան նաև պասիվ նախադասություններ: Խնդիրն այն է, որ բայի սեռը բնորոշելիս գերմաներենում առաջնային ենք համարում շարահյուսական մոտեցումը: Չնայած ձևական տարբերություններին՝ իմաստային առումով երկու լեզուներում համընկնում է կրավորական սեռը, առկա է

իմաստների համարժեք փոխանցում, ընդ որում՝ փոխակերպված կառույցները պահպանում են ոչ միայն միջուկային նախադասության իմաստը, այլև քերականական իմաստները, ինչպես

wurde gebaut-կառուցվեց

wird gebaut werden-կառուցվելու է

soll (kann) gebaut werden-պետք է կառուցված լինի

կարող է կառուցված լինել

Այս դատողություններից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ բայի սեռի կարգը այնքան էլ միանշանակ չի սահմանվում գերմաներենում և հայերենում: Դրանք բավականին տարբերվում են ինչպես կազմության ձևով, այնպես էլ իմաստային տեսանկյունից: Ի մի բերելով՝ նշենք միայն, որ գերմաներենում բացակայում է այսպես կոչված չեզոք սեռը, այն դիտվում է որպես ակտիվ կառույց, որը սակայն չի կարող ընդունել կրավորական ձև: Եթե առաջնորդվենք գերմաներենում սեռի դասակարգման տրամաբանությամբ, ապա հայերենում չեզոք սեռի բայերը դուրս կմնային սեռի դասակարգումից, դրանք չէին կազմում հակադիր եզր, քանի որ այդ բայերով կազմված նախադասություններում ըստ ենթակա-խնդիր հարաբերության չկա գործողության ուղղվածություն: Մյուս կողմից՝ հայերենում չեն առանձնացվում *subjektiv* կոչվող բայեր, դրա համար գործում է չեզոք սեռ եզրույթը, ինչը թերևս անտեսված է գերմանագետության մեջ: Գերմաներենում որպես առանձին սեռ նշութավորվում է *Zustandspassiv*-ը, որը հայերենում թարգմանվում է որպես հարակատար դերբայով կազմվող կառույց, ընդ որում՝ հարակատար դերբայը միշտ չէ, որ ստանում է վ սեռածանցը: Հարակատար դերբայի՝ վիճակ ցույց տալու առանձնահատկություններից է բխում նաև այն, որ հաճախ ներգործական սեռի բայերի հարակատար դերբայը, առանց կրավորական ածանցման ենթարկվելու, ունենում է կրավորական սեռի իմաստ, օրինակ՝ *գրած նամակ* և այլ ձևերը ներգործական իմաստի հետ զուգահեռ հավասարապես ունեն կրավորական նշանակություն՝ *նամակ, որ գրվել է, գրված նամակ*:

Ընդհանուր առմամբ գերմաներենի համար օբյեկտիվ գործընթացների ներկայացման հնարավորությունները բայի սեռից կախված են համապատասխան բայական ձևերի երկու հատկանիշներից.

ա) ներգործական սեռի դեպքում ենթական ակտիվ գործողն է, այսինքն՝ գործողությունը կենտրոնախույս բնույթի է, իսկ կրավորականի դեպքում ենթական գործողության կրողն է, այսինքն՝ գործողությունը կենտրոնածից է:

1. **Wir sehen** deinen Vorschlag als möglichen Kompromiß an. - Dein Vorschlag wird **von uns** als möglicher Kompromiß **angesehen**. (Peter Eisenberg, S. 140)

2. Weiter oben in der stillen Straße **ward** unter allerhand Mißgriffen eine Handharmonika **gespielt**, wahrscheinlich **von einem Knechte des Fuhrmannes Dankwart**. - Weiter oben in der stillen Straße spielte ein Knecht des Fuhrmannes

Dankwart unter allerhand Mißgriffen eine Handharmonika. (Thomas Mann, Buddenbrocks, S.616)

Ավելի հեռվում՝ խաղաղ փողոցի ծայրից լսվում էր ձեռքի հարմոնիկայի անվարժ նվագը՝ հավանաբար կառապան Ղանկվարտի ծառան էր: (Թոմաս Ման, Բուդենբրոոկներ, էջ 570)

Թարգմանիչը, ցանկանալով պահպանել գրողի ոճը, դիմել է բառային սխալների փոփոխության այն դեպքում, երբ *spielen* բայը անցողական բայ է, օգտագործված է կրավորական կառուցվածքի նախադասության մեջ, հայերեն համարժեք *նվագել* բայը ներգործական սեռի է, թեև **նվագվել* բայածևը հայերենի համար հնչուն չէ:

բ) Գործողությանը մասնակիցների անտեսում (չհիշատակում), որի հիման վրա տարբերակվում են երկու տիպի կրավորական կառույցներ. ենթակայով Passiv ձևեր, որոնք կազմվում են միայն անցողական բայերով, իսկ ենթական այստեղ ցույց է տալիս գործողության կրողին, ինչպես Von nun an gehörte er zur Familie ... und ward von den Angehörigen seiner Braut mit Zuverlässigkeit aufgenommen. (S. 441)- Այդ պահից սկսյալ նա արդեն ընտանիքի անձանց մեջ էր մտնում ... և իր հարսնացուի մերձավորների կողմից ընդունվում էր պատրաստակամությամբ: (էջ 408)

Անենթակա Passiv ձևեր, որոնք կազմվում են ինչպես անցողական, այնպես էլ անանցողական բայերից բաց թողնելով գործողություն կատարողին, երբեմն էլ գործողությունն իր վրա կրողին՝

Es wurde der Fisch herumgereicht, und während Pastor Wunderlich sich mit Vorsicht bediente. (S. 23) կամ Der Fisch wurde herumgereicht...- Բերեցին ձուկը, և պաստոր Վունդերլիխը զգուշությամբ մի կտոր վերցրեց: (էջ 18)

Es wird hier viel getanzt կամ *Hier wird viel getanzt*.

Նշենք, որ գործողության կատարողին չհիշատակելը կրավորական սեռի կարևորագույն առանձնահատկություններից է, և շատ դեպքերում հենց այդ հնարավորությամբ է պայմանավորված համապատասխան կրավորական կառույցի ընտրությունը: Այնուամենայնիվ խոսողի մասին հիշատակումը կամ չհիշատակումը ենթակայով Passiv ձևերում դրանց հիմնական նշանակությունը չի փոխում:

Ստացվում է, որ անցողական բայով արտահայտված ստորոգյալի հետ, եթե գործողության կատարողը ենթական է, ապա բայը դրվում է ակտիվ ձևով, իսկ եթե գործողության կատարողը արտահայտված է խնդրով, ապա գործածվում է կրավորական ձև (1):

Շատ հաճախ գերմաներենի կրավորական նախադասությունը հայերենում արտահայտում ենք ներգործական կառույցով կամ ընդհուկառաքել գերմաներենում Passiv-ն ավելի գործածական է, քան հայերենում, օրինակ՝

...Dieses Treppenhaus, das im ersten Stockwerk von der Fortsetzung des gußeisernen Treppengeländers gebildet ward. (S.426) – Աստիճանավանդակը, որ երկրորդ հարկաբաժնում չուզուն բազրիքների շարունակությունն էր կազմում: (Էջ 394)

Da waren zum Beispiel, geleitet von dem Turnlehrer Herrn Fritsche, die Turnspiele, die zur Sommerszeit allwöchentlich draußen auf dem "Burgfeld" veranstaltet wurden. (S.622) - Գոյություն ունեին, օրինակ, մարմնամարզության ուսուցիչ պարոն Ֆրիչեի կողմից հսկվող զանազան մարմնամարզական վարժություններ, որոնք ամառվա ընթացքում ամեն շաբաթ կազմակերպվում էին դրսում: (Էջ 575)

Թարգմանիչը հարազատ է մնացել բնագրին, հայերենին ավելի բնորոշ կլիներ ներգործական ձևի կիրառումը, օրինակ՝ Մարմնամարզության ուսուցիչ պարոն Ֆրիչեն ղեկավարում էր զանազան մարմնամարզական վարժություններ, որոնք ամառվա ընթացքում ամեն շաբաթ կազմակերպվում էին դրսում:

Draußen ward Hanno wieder in seinen Wagen gesetzt. (S. 425) – Դրսում Հաննոյին նորից իր սայլակը նստեցրին: (Էջ 393)

Հայերենում բայի սեռի կարգի ուսումնասիրությունների շրջանակում շատ կարևոր տեղ են զբաղեցնում պատճառական բայերը: Պատճառական բայերը, սեռով, քերականական ընդհանուր իմաստով չտարբերվելով պարզ⁴ ներգործականներից, նրանցից տարբերվում են իրենց դրսևորած գործողության յուրահատուկ բնույթով: Իսկ դա արտահայտվում է նրանում, որ պատճառական (բաղադրյալ ներգործական) բայերով դրսևորված գործողությունների ուղիղ խնդիրը ոչ միայն ներգործության ենթարկվող այլև մի դրությունից մյուսին անցնող, մի այլ դրության մեջ մտնող առարկա է: Այս յուրահատկությունն է, որ դրանց առանձնացնում է և դնում իմաստային մեկ այլ խմբի՝ պատճառական բայերի մեջ: Եթե պարզ ներգործական բայերը արտահայտում են այնպիսի գործողություն, որի համար պահանջվում է ենթակայի գործողությունն իր վրա կրող առարկա, ինչպես *Աղջիկը ծաշ է ուտում*, ապա պատճառական բայերն արտահայտում են այնպիսի գործողություն, որի կատարման համար պահանջվում է մի առարկա, որը ենթակայի գործողության ազդեցության տակ կներգործի մի ուրիշ առարկայի վրա կամ ենթակայի կատարած

⁴ Այստեղ պարզ և բաղադրյալ անվանումները գործածվում են պայմանականորեն: Օր.՝ Տնօրենը նրան ազատեց աշխատանքից: Տնօրենը նրան հեռացրեց աշխատանքից: Առաջին և երկրորդ նախադասությունների միտքը բոլորովին տարբեր է, որովհետև առաջին օրինակի մեջ գործողությունը կատարում է ենթական (ներգործական սեռի բայեր), իսկ երկրորդ օրինակի մեջ գործողությունը ենթական չի կատարում, այլ նրա դրդմամբ կատարում է մի ուրիշ առարկա (պատճառական սեռի բայեր), ազատել-հեռացնել բայերը տարբերվում են կազմությամբ՝ առաջինը՝ պարզ, երկրորդը՝ բաղադրյալ ներգործական բայեր են:

գործողությունը պատճառ կհանդիսանա մեկ այլ գործողության համար, ինչպես *Մարգիկը վազեցնում է տղային*:

Հայերենում պատճառական բայերի մեծ մասը կազմվում են չեզոք բայերի հիմքի վրա, ինչպես, օրինակ, *վազեցնել, մոտեցնել, բարձրացնել*: Այդ պատճառով էլ դրանցով արտահայտված գործողությունների դեպքում առաջին գծի վրա է մղվում այն, որ ենթական ոչ թե ինքն է *վազում, մոտենում, բարձրանում*, այլ *վազեցնում է, մոտեցնում է, բարձրացնում է* մեկ ուրիշի, իսկ այդ մեկ ուրիշը ոչ միայն *վազեցվում է, մոտեցվում է, բարձրացվում է*, այլև *վազում է, մոտենում է, բարձրանում է*: Պատճառականության իմաստ բայերը ձեռք են բերում նաև *տալ* բայի հարադրությամբ, ինչպես՝ *միրել տալ, բերել տալ, հեռացնել տալ*:

Գերմաներենում այսպիսի բայերի խումբ՝ չի առանձնացվում, այս իմաստը կազմվում է *lassen* բայի հարադրությամբ ինչպես անցողական, այնպես էլ անանցողական բայերով՝ *kaufen lassen, laufen lassen*: Պատճառական բայերով դրսևորված գործողությունը կարծես թե հանդես է գալիս որպես երկփեղկված գործողություն: Այստեղից դժվար չէ եզրակացնել, որ երբ հայերենում պատճառական բայերը չունեն իրենց համապատասխան չեզոքները, ապա չի կարող հանդես գալ այս բայերի արտահայտած գործողության յուրահատուկ բնույթը, դրանց պատճառականությունը: Պարզ ներգործական և պատճառական բայերի (բաղադրյալ ներգործական) միջև գործողության, ենթակայի և ուղիղ խնդրի փոխհարաբերության տեսակետից շարահյուսական առումով տարբերություն չկա: Այդ երկու խմբի բայերն էլ ցույց են տալիս մի այնպիսի գործողություն, որ բխում է ենթակայից և անցնում է ուղիղ խնդրին: Պատճառական բայերը, ունենալով իրենց համապատասխան չեզոքները, ի հակադրություն դրանց, ավելի ցայտուն կերպով են դրսևորում ներգործական սեռի քերականական էությունը՝ ցույց տալով մի այնպիսի գործողություն, որի ազդեցության տակ ուղիղ խնդիրը մի որևէ վիճակի, դրության մեջ է մտնում կամ մի դրությունից անցնում է մի այլ դրության: Պատճառական բայերն իրենց արտահայտած այդ իմաստով ոչ թե հակադրվում են պարզ ներգործական բայերին, այլև նրանց հետ քերականական միասնություն են կազմում միավորվելով ներգործական սեռ քերականական կարգի մեջ՝ հիմք ընդունելով պատճառական բայերի՝ ուղիղ խնդրի առնելու հատկանիշը: Ա. Աբրահամյանը իր «Բայը ժամանակակից հայերենում» աշխատության մեջ տվել է բայերի սեռերի դասակարգման ուրույն համակարգ: Նա անցողականությունը և անանցողականությունը համարում է սեռադասեր, որոնց մեջ տարբերակում է երեք սեռ և երկու սեռային առում՝ ներգործական, կրավորական, չեզոք սեռեր և պատճառական ու միջին-անդրադարձ սեռային առումներ:⁵ Նա պատճառական բայերը

⁵ Ա. Աբրահամյան, "Բայը ժամանակակից հայերենում", Երևան, 1962, էջ 515-516

առանձնացնում է ներգործականներից՝ չհամարելով անկախ սեռ, այլ միայն սեռային առում՝ ի տարբերություն Ս. Աբեղյանի և հետագայում է. Աղայանի, որոնք պատճառական բայերը դիտել են իբրև առանձին սեռ:

Գերմաներենում այսպես կոչվող "kausativ", թարգմանաբար՝ պատճառական բայերը անցողական են և արտահայտում են մի գործողություն, որ ենթական ինքը չի կատարում, այլ միայն պատճառ է լինում մեկ ուրիշի կողմից գործողության կատարման համար, ինչպես՝ Die Sonne trocknete die Kleider. – Արևը էր զգեստները: (kusativer Vorgang)– Die Kleider trockneten. – Ձգեստները չորանում էին: (Zustandsänderung)

Kausativ բայերի շարքը կարելի է համալրել ևս մի շարք բայերով, որոնք գերմաներենի քերականության մեջ ներկայացվում են որպես այսպես կոչված "Faktitive (bewirkende) Verben" (թարգմանաբար՝ ներգործուն), օրինակ՝

պատճառական

flößen-կաթեցնել
lähmen-խնդել
säugen-կերակրել
schallen-հնչեցնել
schwemmen-լողացնել
senken-ընկղմել
sprengen-պայթեցնել
tranken-խմեցնել
versenken-սուզել

ոչ պատճառական

fließen-հոսել
lahmen-կաղալ
saugen-ծծել
schallen-հնչել
schwimmen-լողալ
sinken-ընկղմվել
springen-պայթել
trinken-խմել
versinken-սուզվել u.a.

Արդի հայերենում կրավորական բայերի մի մասը միայն կրավորական սեռի իմաստ է արտահայտում, իսկ մյուս մասը կարող է արտահայտել և՛ կրավորական, և՛ չեզոք սեռի իմաստներ: Այսպես, օրինակ՝ հանձնվել, պատրաստվել բայերը թե ձևով, թե իմաստով մեկ կարող են գործածվել որպես կրավորական սեռի՝ ցույց տալով, որ ենթական գործողությունն իր վրա է կրում ուրիշից՝

Դասախոսի կողմից գեկուցում էր պատրաստվել:

Գերմաներենում թարգմանվում է որպես կրավորական սեռի նախադասություն՝ Ein Vortrag wurde vom Lektor vorbereitet.

Սակայն այս բայերը գործածում են նաև չեզոք սեռի իմաստով՝ ցույց տալով, որ ենթական ինքն է կատարում գործողությունը, օրինակ՝

Նա պատրաստվում է դատարան դիմել, գերմաներենում համապատասխանում է անդրադարձ ձևը՝ Er hat sich vorbereitet, das Gericht anzureifen.

Այս երևույթը պայմանավորված է նրանով, որ կենդանի լեզվում շեղումներն ու նոր զարգացումներն անխուսափելի են, օրինակ՝ շարժել, բացել, թափել և այլ բայերով արտահայտվող գործողությունը կարելի է փոխակերպել ոչ միայն կրավորականի, այլև չեզոք սեռի, ինչպես՝

Մեքենան շարժվում է քամու արագությամբ, Վարդը բացվում է մայիսին և այլ կառույցներում.

Մի շարք "վ"-ով բայեր ցույց են տալիս երկու կամ ավելի առարկաների այնպիսի գործողություն, որը կատարում է այդ առարկաներից յուրաքանչյուրը: Միևնույն ժամանակ այդ առարկաներից յուրաքանչյուրը հանդես է գալից որպես մյուս առարկայի կատարած գործողության օբյեկտ: Այսպիսի իմաստ արտահայտող բայերը կոչվում են փոխադարձ բայեր, օրինակ՝ *համբուրվել, տեսնվել, ողջագուրվել, զարկվել*, և կան բայեր, որոնք ունեն վ սեռածանցը, բայց կրավորական չեն, օրինակ՝ *սիրահարվել* (ներգործական), *գունատվել, հիասթափվել* (չեզոք) և այլն: Գերմաներենում անդրադարձ բայեր կազմվում են *sich, einander* դերանուններով և որպես կանոն հանդես չեն գալիս կրավորական կառույցներում՝ *sich küssen, sich umarmen, sich sehen*.

Եթե հայերենում ներգործական և կրավորական բայաձևերի հակադրությունը արտահայտվում է հիմնական մասնիկավորմամբ (սիրել-սիրվել, խաղացնել-խաղացվել), ապա գերմաներենում գերիշխում են վերլուծական ձևերը: Չստ էության կրավորականները նկարագրական ձևեր են և կազմվում են հիմնականում անցողական բայերի և *werden* օժանդակ բայի Partizip II-ով:

Գերմաներենի համար սեռի կարգը ունի առաջնային նշանակություն, քանի որ դրանից բխող խնդրառությունն այս լեզվում նախադասության կազմության համար ունի մեծ նշանակություն: Խնդրառությունը համընդհանուր բայական — շարահյուսական կարգ է, որը դրսևորվում է գոյականների և առարկայական իմաստ արտահայտող այլ բառերի՝ բայերից ունեցած կախմամբ: Բայերը այս կամ այն հոլովով կամ հոլովով ու կապով արտահայտված խնդիրներ ու պարագաներ են առնում իրենց իմաստի կամ սեռի թելադրմամբ, ընդ որում՝ սեռի պահանջով դրված խնդիրները՝ կրող (ուղիղ) և ներգործող խնդիրները հատուկ են միայն բայերին (առաջինը՝ ներգործական, իսկ երկրորդը՝ կրավորական սեռի բայերին):

Գերմանագիտական հին ուսումնասիրություններում որպես կրավորական կառույցներ նշվում են միայն *werden* օժանդակ բայով ձևերը, որպես ընթացքի կրավորական, իսկ լինել օժանդակ բայով կրավորականը վիճակի կրավորական: Գերմանագիտական նոր գրականության մեջ կրավորական սեռը դասվում է քերականական փոխակերպումների շարքին և բայի շարահյուսական գործառնության ելնելով բնութագրվում է արժույթայնությամբ, ընդ որում կապով կազմված ձևերը համարվում են ոչ պարտադիր բայական լրացումներ:

Մինչև 60-ական թթ. կրավորական նախադասությունները համարվել են ներգործականից կազմված ձևեր (Duden Grammatik 1981): Հետագայում հաստատվում է այն կարծիքը, որ կրավորական սեռը կազմությամբ անկախ է (Leiss 1992) և իրողության բայական արտահայտման առանձին ձև է: Տարբեր լեզուներում ձևերի կազմության բազմազանությունը, ինչպես նաև այդ ձևերի կազմության փոփոխության (Paraphrasierung) հնարավորությունները ապացուցում են լեզվական նշանի կամայականության գաղափարը, (որն առաջին

անգամ ներկայացրել է Սոսյարը), ընդ որում դա վերաբերում է ոչ միայն բառային միավորներին, այլ քերականական ձևությաններին:

Այսպիսով՝ բայի սեռն ըստ էության քերականական կարգ է: Այն դրսևորվում է իբրև ուրույն քերականական իմաստի և համապատասխան արտահայտության միջոցների միասնություն: Բովանդակության պլանում, ինչպես վերը նշվեց, ենթադրվում է այնպիսի գործողություն, որտեղ պարտադիր է ինչպես գործող անձի (կամ առարկայի), այնպես էլ ներգործվող անձի (կամ առարկայի) առկայություն, ինչը բնորոշ է անցողական բայերին: Շնորհիվ սեռային ձևերի համապատասխան գոյականները նախադասության մեջ կարող են ստանձնել տարբեր դերեր՝ հանդես գալ կա՛մ որպես ենթակա, կա՛մ էլ որպես խնդիր: Կրավորական կառույցներում անդեմ գոյականը կարող է ընդհանրապես չգործառնել, օրինակ՝ Hier wird gesungen.

Արտահայտության ձևը համապատասխանում է այն տեսակետին, որ սեռի կարգը փոխակերպական բնույթի է: Խոսողը ներկայացնում է գործողությունը, ընդ որում գործողությունը իմաստային անփոփոխակ է անկախ նրանից այն ներգործական բնույթի է, թե կրավորական:

Բայի սեռի քերականական կարգը մեծ հետաքրքրություն է ներկայացնում ռաբանության համար, քանի որ խոսողին հնարավորություն է տալիս իրադրությունը տարբեր մոտեցումներով և լեզվական տարբեր կադապարներով ներկայացնել:

Գրականություն

1. Metzger Lexikon Sprache, Herausgegeben von Helmut Gluck, J. B. Metzger Verlag, 1993
2. Hadmod Bußmann Lexikon der Sprachwissenschaft, Alfred Kröner Verlag in Stuttgart, 2002
3. Eisenberg, Peter. Grundriß der deutschen Grammatik, Weimar Metzler, 1994
4. Leiss, E. Die Verbalkategorien des Deutschen. Ein Beitrag zur Theorie der sprachlichen Kategorisierung, Berlin, 1992
5. Sabine Pape-Müller. Textfunktionen des Passivs, Max Niemeyer Verlag Tübingen, 1980
6. Fritz Wagner. Untersuchungen zu reflexive-Konstruktionen im Deutschen
7. Irene Rapp, Studien zur deutschen Grammatik, Zu passivischen Konstruktionen mit dem 3. Status, Tübingen, 1997
8. Duden, Die Grammatik, Dudenverlag, Mannheim• Leipzig• Wien• Zürich, 2006
9. Klaus Brinker, Das Passiv im heutigen Deutsch, Form und Funktion, München, 1971
10. Thomas Mann, Buddenbrocks, Fischer Taschenbuch Verlag, Frankfurt am Main, 2004
11. Helbig / Buscha, Deutsche Grammatik, Verlag Enzyklopädie, Leipzig, Berlin, München, 1996
12. Wolf-Dietrich Jägel, Deutsche Grammatik, Schöningh Verlag, 1976
13. Թոմաս Ման, Բուդենբրոոկներ, Սովետական գրող իրատարակչություն, Երևան, 1986, թարգմ. Հակոբ Մովսես
14. Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, Հատոր 2, Երևան, 1974
15. Ս. Աբելյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965
16. Ս. Ե. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2004
17. Յու. Գաբրիելյան, Գերմաներեն լեզվի տիպաբանություն, Երևան, 2006
18. Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Երևան, 1962, էջ 515-516